

Յյուսկից, մեթոդական ձեռնարկում /Երևան, 1983/, որ տպագրել ենք
բուհական ուսանողութան համար:

Գ.Ե.ԱՐԵՇԱՆ

ԵՊՀ

ՅՈՒՆԵՍԿՈ ԿՈՄԻՏԵ, ԴԱՐՄԱՆԱԲԱՆՈՒԿԻ ԳԱՎԱԾԻ ՊԱՏԿԵՐԱՅԻՆ

ՀՈՐԻՆՎԱՅԵԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՓՈՐՁ

1. Եսկայի սարահարթում Բ.Ա.Կուժտինի ղեկավարութամբ կա-
տարված պեդոլոգների ցնթագրում /1937 թ./ V, «Զորուխթաշ», դամ-
բանաբլրից հայտնաբերվել է պատկերային հորինվածքով արծաթե գա-
վաթ: Դամբանաբլուրը թվագրվում է մ.թ.ա. XVIII - XVII դդ., ուս-
տի նույն ժամանակաշրջանին կամ նրան նախորդող դարերին պետք է
վերագրել նաև գավաթը, որը, հայտնաբերման օրվանից սկսած, զրա-
վել է քաղմթիվ հետազոտողների ուշադրությունը:

2. Գավաթը դրսից պատված է դրվագված պատկերներից կազմված
երկու ծոփորով, որոնք լրացվել են փորագրված մանրամասներով:
Ստորին ծոփորում պատկերված են քայլող եղջերուներ՝ հինգ արու
և չորս էգ: Վերին ծոփորը ներկայացնում է ծառի տակ նստած մար-
դակերպ աստվածուհիան ծիսական խնջույքը: Աստվածուհուներ հե-
ղուկ է քմպում երկփող գավաթից և իր սեղանից կերակրում զահի
առջև պառկած երկու գայլին /կամ շներին/: Սեղանի կողքին պատ-
կերված է սրբազան հեղուկի անոթը, իսկ զահի ոտքերի տակ մորթի
է փռված: Դիմացից աստվածուհուներ մոտենում է 23 մարդակերպ է-
ակներից կազմված շարքը, ձեռքերին բռնած միատեսակ երկփող գա-
վաթներ: Արարողութան ըուրը մասնակիցները միատեսակ հագուստ
են կրում, իսկ ղեմերը ծածկված են գայլակերպ ղիմակներով: Եր-
թում պատկերված յուրաքանչյուր էակի հագուստին գայլի պոչ է ամ-
րացված, որից գուրկ է նստած աստվածուհուներ:

3. Զորուխթաշի գավաթն ուսումնասիրողները /Բ.Ա.Կուժտին, Պ.
Ն.Ուշակով, Շ.Յա.Ամիրանաշվիլի, Վ.Վ.Բարդավելիձե և ուրիշներ /
դրա պատկերներում ղիտել են՝ որսի աստվածուհուներ, ինչպես նաև
/կամ/ պողաբերութան պաշտամուների հետ կապված ծիսակատարու-
թյուն: Վերջերս այդ պատկերահորինվածքը մեկնաբանվել է որպես
,,կյանք-մահ, ղիցաբանական պարբերաշրջանի առասպելություններից
մեկի արտացոլում /Բ.Տ.Բերիաշվիլի, Ջ.Ն.Սխիրթլաձե/, որը, ըստ

խ, ավելի միշտ է: Գավաթի ծագման մասին եղած վարկածներից երկու տեսակետ հիմնադրուկ չէ՝ այն դիտվում է որպես Փոքր Ասիայից ներմուծված և կամ հըրև տեղական արտադրանք՝ պատրաստված կուրի և Արարսի միջագետքի տարածքում: Այդուհանդերձ, այդ պատկերահորինվածքը հարազատ է Հայկական լեռնաշխարհի հյուսիսային մասից հայտնաբերված միջին և ուշերոնգեղարյան կերպարվեստի հուշարձաններին:

4. ,,Այս նր-մահ-հարուժյուն,, դիցաբանական պարունաշարձանին վերաբերող՝ եղջերվի, բաղի և զայլի երրորդուժյամբ խորհրդանշված հնդկությունական հիմնական առասպելություններից մեկի հայտնաբերումը /4.ն.Արեշյան/ որոշակի նշանակություն ունի Քորուխթաշի գավաթի պատկերների մեկտաքանման համար: Գավաթի պատկերահորինվածքի կերպարներն ամփոփում են այդ առասպելությունի սահմաններում, իսկ պատկերված ամբողջ արարողությունը հիանալի զուգահեռներ ունի գերմանական ժողովուրդների բանահյուսությունյան մեջ: Հատկապես նշանակալից է ,,Ավագ էղդայի,, սագաներից մեկը՝ ,,Գրիմների աքքը,, Գրիմների /,,Գրիմալոթը,,/ Օդինի կերպարանքներից մեկն է: Գավաթի պատկերներում և այդ սագայում հանդես են գալիս դիմալավոր կերպարներ: Գավաթին պատկերված աստվածությունը բազմաձև է ծառի տակ, ինչպես իզդրասիլ ծառի հովում՝ Գրիմներ-Օդինը: Օդինը գավաթի աստվածությունյան նման իր սեղանից կերակրում է զուգյ գայլերին՝ Գրիմին և Պրևիլին: Օդինը ևս, ինչպես գավաթի աստվածությունը, քմկելիք է մաշակում, առջինը՝ միայն գինի էյնհերիների /անդրշիրիմյան աշխարհ տարած հերոսներ/, երկրորդը՝ դիմալավոր մյուս էակների հետ: Աստվածություն կերպարը նման է գավաթի մարդակերպ մյուս էակներին և Օդինը հանդես է գալիս որպես հերոսների առաջնորդ՝ նրանց կերպարանքով: Գավաթի տիեզերական ծառի արմատների տակ պատկերված են եղջերուներ, ,,Գրիմների աքքում,, իզդրասիլ ծառը կրծում են չորս եղջերուներ: Վերջապես, ,,Աքքում,, կույն ծառի հետ կապված է Հեյդրուն այժք, որը գավաթի պատկերներում հանդես է եկել ծառի տակ փոխված մորթու տեսքով: ,,Աքքում,, նյարագրված ծիսակատարությունը տեղի է ունենում հերոսների անդրշիրիմյան սրանելի աշխարհում՝ Վալհալլայում, որը համահնչյուն է Քորուխթաշի գավաթը թողման արարողության քնթացքում օգտագործելու նպատակին: Գավաթի պատկերներում ,,Օդինի,, և հերոսների հոգիների դիմակների զայլաչին կերպարանքը բացատրվում է եվրասիական առասպելական պատկերացումներով: Վերակազմված առասպելությունը արտահայտված է նաև հայկական բանահյուսությունյան մեջ:

5. Կատարված վերլուծությունը հետևում է երկու եզրակացու-

Քյուն.

1/ Բորուիթաշի զավաթը պատվիրողները, այսինքն՝ Եռեդրի V զամբանաբլուրում թաղված մ.թ.ա. XVIII - XVII դդ. իշխանավորների, հնդեվրոպական դիցաբանության կրողներ են եղել:

2/ ,,նյանը-մահ-հարություն,, դիցաբանական պարենրաշրջանի նախահնդեվրոպական առասպելներից մեկը պահպանվել է ,,Գրիմների ասքում,,:

Կ.Ռ.ՔԱՐՔՅԱՆ

ՀԱԽ

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՄԵՂՆԱԳՈՐԾ ՍՐՔԻՉՆԵՐԻ ԻՆՈՒԹԱԳՐՄԱՆ ՓՈՐՁ
/Ըստ ՀԱԹ-ի հավաքածուի/

1. Հայաստանի ազգագրության պետական թանգարանի գործիվածքի հավաքածուն քնդդրվում է ժողովրդական գեղարվեստական գործիվածքի տարբեր տեսակներին հազարավոր նմուշներ՝ գորգեր, կարպետներ, գորգագործ ու կարպետագործ այլ կենցաղային առարկաներ, ասեղնագործության ու ժանյակների նմուշներ: Հատուկ ուշադրության են արժանի սրբիչները, որոնք ասեղնագործ մյուս առարկաների հետ միասին ներկայացնում են Հայաստանի տարբեր շրջանների XIX դ. և XX դարասկզբի ասեղնագործական արվեստը: Հատկապես հարուստ են ներկայացված Արևմտյան Հայաստանի ասեղնագործական կենտրոններում ստեղծված սրբիչները:

2. Հայաստանի տարբեր պատմա-ազգագրական շրջաններում սրբիչների համար օգտագործել են տարբեր գործիվածքներ, կարատեսակներ, թելեր: Գերապատվությունը տալով տարբեր հյուսվածքի սպիտակ բամբակե գործիվածքներին, գործածել են նաև վուշե գործիվածքներ: Սրբիչներն ասեղնագործում էին գերազանցապես մետաքսե, նրբեմն նաև բամբակե թելերով՝ ոսկեթել, արծաթաթել, մետաղալար-մետաղաթելների գուգակցմամբ: Կիրառված են այսպես կոչված երկկողմանի կարատեսակները՝ վանի կարք, մաղակարք, համրվի և երկերես հարթակարք, թելքաշք և այլ կարեր, որոնք հավասարապես ղետելի են երկու կողմից էլ:

3. Սրբիչները լայն կիրառություն են ունեցել հայ ժողովրդի կենցաղում: Սոսրյա քնտանեկան հարաբերություններում դրանք հասարակ, համախ կոպիտ անյնագործական արտադրանք են եղել, որոնց քնդող է համեմատաբար պարզ հարդարանքը: Անհամեմատ նուրբ և